

30.06.2020թ.

ժ.11:00

*Մասնակցում էին՝ Ս.Մասցակյանյան (խորհրդի նախագահ), Գ.Ասանյան, Գ.Գևորգյան, Վ.Դավթյան, Ն.Բաղդասարյան, Ա.Սաֆյան, (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)
Հրավիրված էին՝ Լ.Մարկոսյան, Ա.Հարությունյան, Վ.Արևշատյան
Նիստն անցկացվել է հեռավար:*

Օրակարգի նախագծում չորս հարց.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից՝ 2008-2018 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազաները ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից՝ 2018 թվականին «Կազմակերպության արդյունաբերական արտադրանքի մասին» Ձև 1-արտ (տարեկան), «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 1-ՏԳ (տարեկան), «Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 3-Ֆ (տարեկան), «Մետրոպոլիտենի, ճոպանուղու և տրոլեյբուսային տրանսպորտի աշխատանքի մասին» Ձև 1-Էլեկտրո (տարեկան), «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» 1-ԿՇ (տարեկան), «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» 2-ԿՇ (տարեկան) և «Ծառայությունների ծավալի մասին» Ձև 1-ծառայություններ (ամսական), «Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի և շարժակազմի մասին» Ձև 1-ավտո (ամսական), «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի աշխատանքի մասին» Ձև 1-ավիա (ամսական), «Հեռուստառադիոձրագրերի կազմման և հեռարձակման, հեռահաղորդակցության գործունեության մասին» Ձև 13-կապ (ամսական), «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» Ձև 2-երկաթ (ամսական), հաշվետվությունների հիման վրա ձևավորված անվանագրքով տվյալների բազաները, խմբավորված տարեկան կտրվածքով, Համաշխարհային բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/

3. «Մեծածախ և մանրածախ առևտրի ծառայությունների, ավտոտրանսպորտային միջոցների և մոտոցիկլների նորոգման ծառայությունների դասակարգիչը (9 նիշ մակարդակ) հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ.Արևշատյան/

4. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից՝ 2008-2018 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազաները ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնին՝ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնին տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2008-2018 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազաները: Տվյալները կարող են օգտագործվել բացառապես հետազոտական նպատակներով, չեն կարող փոխանցվել այլ անձանց, չեն կարող հրապարակել անվանական հարթության անվանագրքով տվյալներ և համադրվել այլ աղբյուրներից

ստացված անվանական տվյալների հետ, նշվելու են բոլոր հրահանգավորված նյութերի աղբյուրները, այդ անվանագրերով տվյալները հետազոտություններից հետո ոչնչացվելու են:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից՝ 2018 թվականին «Կազմակերպության արդյունաբերական արտադրանքի մասին» Ձև 1-արտ (տարեկան), «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 1-ՏԳ (տարեկան), «Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 3-Ֆ (տարեկան), «Մետրոպոլիտենի, ճոպանուղու և տրոլեյբուսային տրանսպորտի աշխատանքի մասին» Ձև 1-Էլեկտրո (տարեկան), «Կատարված շինմոնտաժային աշխատանքների մասին» 1-ԿՇ (տարեկան), «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» 2-ԿՇ (տարեկան) և «Ծառայությունների ծավալի մասին» Ձև 1-ծառայություններ (ամսական), «Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի և շարժակազմի մասին» Ձև 1-ավտո (ամսական), «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի աշխատանքի մասին» Ձև 1-ավիա (ամսական), «Հեռուստառադիոձրագրերի կազմման և հեռարձակման, հեռահաղորդակցության գործունեության մասին» Ձև 13-կապ (ամսական), «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» Ձև 2-երկաթ (ամսական), հաշվետվությունների հիման վրա ձևավորված անվանագրերով տվյալների բազաները, խմբավորված տարեկան կտրվածքով, Համաշխարհային բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/

Որոշեցին՝

թույլատրել նշված հաշվետվությունների հիման վրա ձևավորված անվանագրերով տվյալների բազաները տրամադրել Համաշխարհային բանկին, խմբավորված տարեկան կտրվածքով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3. «Մեծածախ և մանրածախ առևտրի ծառայությունների, ավտոտրանսպորտային միջոցների և մոտոցիկլների նորոգման ծառայությունների դասակարգիչը (9 նիշ մակարդակ) հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ.Արևշատյան/

Որոշեցին՝

հաստատել «Մեծածախ և մանրածախ առևտրի ծառայությունների, ավտոտրանսպորտային միջոցների և մոտոցիկլների նորոգման ծառայությունների դասակարգիչը (9 նիշ մակարդակ)» համաձայն հավելվածի:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ